

16306

16307

16308

16309

16310

16311

16312

16313

89199

7-89

574

10. / 422 N 540

ՊԵՐՃ ՊԹՕՅԵԱՆՑ


891.99

11-89

ՄԻՔԵԼ ԱՂԵՆՑ ԱԲԻԻԼԸ

ԶՐՈՅՑ

(Իրական կեանքից)



Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպար. Յ. Մարտիրոսյանցի. | Типогр. И. Мартиросянца.

Орбеляновская ул. № 1 | 2.

1896

3602

Supplement *և մասնագրություն*

20 03

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го іюня 1896 года.

ՄԻՔԵԼ ԱՂԵՆՅ ԱՐԴԻԻԼԸ



3690-48

4/5
16

ՄԻՔԷԼ ԱՂԵՆՑ ՍԲԴԻԻԼԸ

ՁԴՈՅՑ

(Իրական կեանքից)

Ա.

Աստուած Հանգիստ արքայութիւն տան
լօռեցի Միքէլ աղին. լյաւ մարդ էր լուսահոգին,
բարի, ողորմած, աղքատասէր, ժողովրդասէր,
ժամասէր, աղօթասէր, դպրոցասէր:

Բռնած Լօռուց՝ անց կենաս Փամբակի ձո-
րը, զաս, հասնես Երեւանայ փոսը, սկսած հաս-
տամէջք Լալվարայ սարից մինչև Մասիսի փե-
շերքը՝ Միքէլ աղի արևուն էին երգում. հայ,
քուրդ, վրացի, ռուս, բերդէն նրա պատին ու
յարդանքը ճանաչում էին, նրան սիրում էին,
խօսքի մէկն երկու չէր լինում, հրամանը գլխի
վրայ կատարւում էր:

Ով մի հոգս, մի դարդ ունէր, լուսածաղիկն՝ տրեխները ոտն էր քաշում, ու հեռու մօտիկ չհարցրած՝ Միքէլ աղի դուռն էր վազում, ձեռը նրա փէշն էր քցում, նրան ապաւինում:

Մօտն եկողի խոնարհ բարեւը սրտաբաց առնում էր Միքէլ աղէն, եկողին ներս տանում, կողքին նստացնում, ու զեռ առաջ փորը կուշտ ու կռու տուգացնում էր, մի երկու բաժակ գինի դատարկել տալիս, յետոյ նրա ցաւը հարցնում ու իւր անելիքն անում:

Լուսահոգին ինչպէս էլ մարդաճանաչ էր. եկողը, թէկուզ, օձի լեզու բանացնէր՝ իւր անմեղութիւնը ցոյց տալով՝ և թէկուզ՝ անլեզու, ուրբաթախօս, միամիտ եղբայրս լինէր՝ իւր դարդերը բացատրելով՝ Միքէլ աղէն վրադարին (խսկոյն) հասկանում էր ու իւր վճիռը դնում: Կամ ասում էր՝—մեր տղայ, խօսքերիդ մէջ ճշմարտութիւն կայ, պատմի՛, վերջացրո՞ւ ու ապահով գնա տունդ, գտակդ դիւր գլխատակդ, պառկի, անպատճառ քո բաւականութիւնդ կըստանաս, և կամ թէ՛ ցուցամատը թափ էր տալիս մեղաւորի երեսին ու խոժոռ դէմքով սաստելով՝ ասում.—մեղաւոր ես, գնա, հաշտուիր, գնա քո

հակառակորդիդ իմ կողմից բարեւ տուր ու ասա, որ ես հրամայում եմ գործդ սիրով վերջացնել:

Գիտէր այնուհետեւ Միքէլ աղէն, որ հաշտութիւնը կալացած, պրծած է:

Պատահում էր, որ միաժամանակ երկու հակառակորդ միասին էին ներկայանում Միքէլ աղին ու առաջկտրուկ անելով՝ իրանց զանգատն անում:

Միքէլ աղէն իւր կարճ բեղի տակին ծածաղելով՝ էնքան թողնում էր, որ երկուսն էլ բլբլացնելով՝ իրանց ցաւը յայտնեն, յետոյ կամ անխօս, դարձեալ ցուցամատով, մօտ էր կանչում, մէկին ու միւսին ականջները բռնում, իրար մօտեցնում և հրամայում համբուրուել, և կամ, յանկարծ՝ տեղիցը վեր էր թռչում, «դառնալի» (տիրանման) մի մի ապտակ էր շրխկացնում երկուսին էլ և ձայն էր տալիս ծառային. «երկու փուչ կենդանիներին» տանել, բանտարկել, դոմը կոխել, դուռն երեսներին կողպել:

Գլխաւորն էս է, որ երկուսն էլ գլուխը կախ, լեզուն փորը քաշած, տաւարի պէս առաջ ընկած՝ գնում էին ու հնազանդուում:

—Մեր աղէն, մեր գլխի տէրը, մեր դա-

տաւորն է, ասում էին իրարու, էսօր կը պատժի, էգուց կը սիրի, ձեռնաց մեր դիւանը կանի, հապա լաւ կը լինի, որ գործներս ծանրացնենք, կաշառքներ տալով՝ տարիներով՝ զնալ գալով՝ ջան մաշենք, ոտնահան լինինք, քանդուինք, օրէն հացի մուրացկան դառնանք ու վերջը՝ դատարկ ձեռքով, քո լաշին յետ նստենք:

Եւ ճշմարիտ, Միքէլ աղէն կատարեալ դատաւոր էր, արդարադատ և անաչառ, բայց և գլխած ու ժողովրդի ներքին կեանքին տեղեակ: Ում ինչ, թէ նա դրից ու օրէնքից չէր խօսում դատելու ժամանակ, կամ իւր աստիճանի ու պաշտօնի զօրութիւնովը չէր գործում:

Ուզում եմ ասել, թէ Միքէլ աղէն փողի շինած աղա հօ չէր. նա օրինաւոր չիւրիւրէն էր որ կար, կարմիր էսթիլ, 12 հատ ոսկէ կոճակներով, տեղն եկած ժամանակը՝ պտղաւոր փշուրէն էր ծածկէ թուրը կողքիցը շրկակալով կախ. բայց քաւ լիցի, թէ նա մէկի մօտ իւր պարզ գէները յիշած լինի:

Մարդը խելքի տէր էր, զրի սեւ ու սպիտակը ճանաչում էր, հայերէն, ռուսերէն, ղեռ ասում են՝ թուրքերէն ջրի պէս կարդում էր,

զրիջը որ թղթի վրայ էր գնում, ճոճոցը հնդստան էր հասնում:

Մի Լօռի էր, մի միքէլ աղա. Սանահնի ու Հախպատի վանքերի հին հին միաբանքն էլ նրա կիսի չափ ճաշոցն ու Այսմաուրքը բերան չգիտէին. գնում էր ժամ՝ նա էր տէրտէրի կողքին կանդնած ժամ ասողն ու տէրտէրին գլխի քցողը:

Նա իր կեանքումը ժամիցը յետ չի ընկել, որ օրը եկեղեցի չգար, աշխարհքը հասկանում էր, որ Միքէլ աղէն գեղումը չի:

Բանն էս է, որ երկրի դատաւորներն իրանք էլ ուրախ էին, որ Միքէլ աղէն իրանց բեռ թեթեւացնում է. էդ բանի համար դատաւորներն էլ սիրում էին Միքէլ աղին:

Արի ու մի սիրիւր, կամ քէֆին դիպիր, մարդի սիրտը բաց, դուռը բաց, ձեռը բաց, սուփրէն քցած, Աստծու հաղար ու մի բարիքը վրէն շարած: Իլ նրա աղ ու հացին ո՞վ խէթ մտիկ կը տար, մանաւանդ, որ հացի հետ ամեն արժանաւորութիւն ունէր:

Նրա քաղցը ու ծիծաղկոտ աչքերը, ուրախ դէմքը, անուշ լեզուն ու չէր գրաւում: Հերիք էր՝ երեսին մտիկ տաս, որ սիրահարուես:

Լսի բաժինը ծերացել, սպիտակել էր, բայց կտրված ու ջահէլ երիտասարդից աւելի աշխույժ ու գեղեցիկ էր, երեսը բոլորակ՝ 15 օրէն լուսնակի պէս, աչքերը խոշոր՝ պսպղան մեծ մեծ աստղերի պէս, քթի ծէրը մի քիչ կռացած՝ արծուի կտուցի պէս, տուռ ու լիքը թշերի գոյնը՝ մայիսուան վարդի պէս, մի թիղ հէնց լէն ու բաց ճակատ ունէր. ծերութիւնը մենակ նրանից էր երևում, որ ճակատին ու աչքերի վերին կոպերի անկիւններումը մի քանի խորշոմներ իրանց ակօսը քցել էին:

Չի կարելի ասել, թէ Միքէլ աղին ամենքը հաւասարական սիրում էին. մի կարգ մարդիկ կային, որ նրան խիստ ատում էին ու ատամները վրէն կրճատցնում, բայց ձեռքներիցը ոչինչ չէր գալիս, չէին կարողանում նրան վնաս տալ:

Կաշառք սիրողներ էին ղրանք ու պղտոր ջրում ձուկ որսացող, Կաշառք փողով առնողներ, որոնք եղը վեր էին քաշում, տակիցը հորթ ուզում:

Բ.

Մամռն է. շոքից ամենքը փախչում են. ու լքակումը փող ու ազատ ժամանակ ունի, իրան սարերի հովին է տալիս:

Երեք բարեկամներով՝ մենք էլ մտածեցինք Միքէլ աղենց ձորաբաշի հովումը նստել, նրա քաղցր Կաշառքներով մեր հոգին լցնել, նրա սէրը վայելել:

— Ի՞նչ լաւ արիք, որ եկաք, մի քանի անախորժութիւններից սիրտս տխուր էր, զնանք մեր ջրաղացի մօտ ձորումը մի քիչ շունչ քաշենք, ասաց մեր զնալու երրորդ օրը Միքէլ աղէն:

— Մենք աւելի ուրախ կրլինինք, պատասխանեցինք, որ քեզ հետ ժամանակ կուենանք երկար խօսելու. հէր օրհնած, առաւօտից մինչև երեկոյ՝ ղիւան դատաստանի ես նստած, դան-

զատաւորները աչք չեա թափում:

— Դերեզմանը միայն կըզրկի ինձ իմ սիրելի ժողովրդի տեսութիւնիցը, նրանց համար տուն ու դուրս, սար ու ձոր չկայ, ինձ էնտեղ էլ կըզտնեն նրանք:

Գնացինք:

Մեզանից առաջ գնացել էին ձկնորսները:

Առողջ ու լիքը տղամարդիկն երկու երկու մտել էին գոչգոչան գետը, ուռկանները փռում ու խլպտան կարմրախայտները հանում, դուրս շպտտում:

Մենք տեղն ու տեղը մորթոտում էինք, փորտիքը մաքրում, լուանում:

Մեծ կաթսան քլքլթում էր. ձկները թեւախաշ էին, նրանց աչքերի պտուղները սպիտակել էին, քիչ էր մնում, որ դուրս թափուին: Սուփրէն կանաչ խոտի վրայ բացուած էր, մենք պատրաստուում էինք նստելու, որ ձկները լէնատերև խոտերի վրայ փռենք ու պոչերից բռնենք, մինչև գլուխը մին բերաններս քաշենք, փուշը գետը քցենք:

Մեզ ծառայում էին մի քանի ջահէլներ: Նրանք հայեր էին:

Մի թուրք միայն կէս ժամ լառաջ՝ ծառայողների կարգն ընկաւ:

— Հը', ինչ կայ, հատան, ժպտալով հարցրեց Միքէլ աղէն:

Թուրքը ձախ ձեռքը ձախ ծնկանը դրեց, գլուխը ձախ թեքեց, կողքահան խոր գլուխ տուեց և ասաց.

— Գլխիդ դուրբան, աղան, խնդիր ունիմ:

— Դեռ խնդրի ժամանակ չի, հրամայեց Միքէլ աղէն. պղնձի տակը կրակ արա, տղէքանցն օգնիր, էս աղէքանցը պատիւ տանք, յետոյ խնդիրդ կրկատարեմ:

Էդ բանն ինձ շատ զարմացրեց:

Սկզբումն ասացինք, որ Միքէլ աղի համար 72 խաջապաշտի հետ՝ ամեն հաւատի ու դէպի դուլուղ անողը մին էր, որ ամենքը նրան սիրում էին ու նա էլ ամենքին էր սիրում. բայց մենք մի բան թողինք:

Միքէլ աղէն անունը օսմանցով թուրք՝ չէր ուզում տեսնել, աչքով աչքը չունէր օսմանցով թուրքին մտիկ տալու:

— Խէր ըլի, Միքէլ աղան, բնութիւնդ փոխել ես, թուրքասէր ես դառել, Արդիւլիդ մո-

ուացել ես, մէջ ընկալ ես, երբ Միքէլ աղէն
Հասանին սիրով ընդունեց:

— Հաշիւդ սխալ է: Արդիւլը ծալի, մի կող-
մը դիր, թէ կուզես՝ ճաշից յետոյ կըխօսենք:

Ես լռեցի. ինչ խօսելու ժամանակն էր,
անուշ կարմրախայտերից գոլորշին բարձրանում
էր ու ուղիղ քթածակերս էր մտնում:

Այն է՝ ուղում էինք նստել, որ ձորի պտը-
տանից, դուռ արած (կորացած) քարափի ետեւից՝
երեւացին մի թուրքի կին՝ Հետը մի 15 տարե-
կանաչափ լամուկ, և Հեռուից գլուխ տալով՝
մօտենում են:

— Ը՛ր՛ը՛... փորացաւանք ունէ՛իր, ան-
պիտան հասն, ճաշը թողեց, և բարկացած
դարձաւ Միքէլ աղէն կրակի մօտ կանդնած հա-
սանին:

— Ես մեղաւոր չեմ, ոտքդ համբուրեմ, ա-
ղա, ուղում էր արդարանալ Հասանը...

— Հասկացո՛ւ, անպիտան, կրկնեց Միքէլ
աղէն, արջն իր ահէն կըղռուայ, մօրդ բարկաց-
րել ես ու յառաջ ընկել, վաղել, որ պատժից
պրծնես:

— Աղա ջան, մեզ տիրութիւն արա, էդ

անխղճմտանքը մեզ տանից դուրս արեց, չօլը
քշեց, ապրուստ էլ չի ուղում տալ. ես դրան էս
օրի համար ծնեցի, կաթ տուի, մեծացրի, որ
ինձ ու իր պստիկ եղբօրը ծեծի, անհաց թող-
նի, մղկտում էր թուրքի կինը:

— Տղէք, էդ աւագակ Հասանին բռնեցէք,
դուաց Միքէլ աղէն ծառայողներին, չէք տես-
նում, որ արիւն է ուղում անել:

Զուր չէր Միքէլ աղէն ընդհատում թուր-
քի կնոջը, նրա աչքերը մերից սուր են եղել,
մօր խօսելու ժամանակը՝ Միքէլ աղէն տեսնում
է, որ Հասանը ձեռը տարաւ քամակը, չուխի տա-
կից, կամաց կամաց, սկսեց ատրճանակը հանել:

— Տղէք, բռնեցէք Հասանին, կրկնեց Մի-
քէլ աղէն, ջրաղացպան, պարան հասցրու, սրան
կապենք...

Միքէլ աղի խօսքը կիսատ մնաց, Հասանը
կատաղած դայի աչքերով, կատուի նման ծլուկ
եղաւ, յառաջ վաղեց գէպի եղբայրն ու Բէնէմէնը
տրաքացրեց:

Ատրճանակն երեք անգամ բացուեց, չորրորդ
անգամին գնտակն իր տեղն առաւ: Եղբայրը

վեր ընկաւ, ձեռք փոքրափորին սխմած՝ դոմշի նման սկսեց տուլնդալ:

Մէրը գողալով ընկաւ աղի վրայ, իսկ Հասանն ատրճանակը շարունակեց Միքէլ աղի յառաջն ու ինքը ձեռքերը թիկունքին դրած՝ վազեց յառաջ եկող ջրաղացականի մօտ ու ասաց.

— Ես իմ սրտիս մուռը հանեցի, հիմի կըռնեմ կապիր, թող՝ աղէն ինձ Սիբիր դրի:

— Սիրելի հիւրերս, ձայն տուեց մեզ Միքէլ աղէն, համբերեցէք, մի քիչ ախորժակներդ դսպեցէք, էս փորձանքը հեռացնենք, յետոյ նստենք, սէր ու հաշտութիւն հաց ուտենք. ընդունք են ասել՝ «հաշտութիւն լաւ ժամանակը մօլթանին եկաւ, ասեց՝ բարի աջողում»: Էս առածը թուրքերէն ասեց:

Ախորժակն էլ գլխներին խռով եղաւ ու ճաշն էլ:

— Լաւ պըծանք, գողաց Միքէլ աղէն փառփառ ծիծաղելով, երբ մօտ գնաց վիրաւորուածին: Քարեկամներս, այնտեղից ձայն տուեց Միքէլ աղէն, ոչ ախորժակներդ փչացրէք, ոչ սրտերիդ առէք, շուտ հաշտուի՛ր չի, զնդակը ազդրի ներսի կողմից մտել, ետեւիցը դուրս է եկել. կէս

ժամ չի քաշել՝ սա ինքը եղբօր տեղ մեզ կըծառալի. հիմի կըհրամայեմ՝ փալաս ալրել, ձիթի մէջ թաթախել, խոնկէլ անել, վերքի վրայ դնել. իսկ ճաշից յետոյ՝ եղբայրներին ու մօրը կըհաշտեցնենք, ճանապարհ կըդնենք:

Հէնց էդպէս էլ եղաւ. մենք մեր Կէֆէ քաշեցինք, թուրքերն իրանց բաւականութիւնս ստացան ու Միքէլ աղի կեանքն օրհնելով՝ գնացին սիրով ապրելու:

Ի՛նչ արեց, ի՛նչ չարեց Միքէլ աղէն, նա մի կողմը քաշեց մօրը, մի քանի խօսք կամաց փսփսաց, Հասանին երկու ապտակ խփեց ու հրամայեց մօր ձեռքը համբուրել, մօրը հնազանդուել: Պատիկ եղբօրն էլ պատուիրեց՝ մեծին հօր տեղ ընդունել, նրա խօսքովը վեր ու նիստ առնել, ինքնազուլի բան չըռնել, կռուել, կռուել, ու «մի դուռն շան պէս» սիրով ապրել: Հետն էլ աւելացրեց. վա՛յ նրան, որ իմ հրամանը կըքանդի, Սիբիրումն էլ տեղ չեմ տալ, էնպիսի մարդի համար իմ դուռը յաւիտեանս չի բացուիլ, էլ այնուհետեւ աշխարհքը մեծ՝ ինքը մէջը, ուր կուզի, թող գնայ:

84-0692



կարծեմ, վերջին խօսքերը Սիբիրից աւելի
[Ժուրքերին սասանացրին:

—Քեզանից աւել մենք տէր չունինք ու
չենք ուզում ունենալ, ասեցին [Ժուրքերն ու
Հեռացան:

—Ասա է, Միքէլ աղա, էս ինչ եմ
տեսնում, Արդիւլիդ Հետ Հաշտուել ես, Հիմի՛ որ
կատարեալ էս հաշտուել, միակ [Ժուր-
քին չէիր սիրում, էն էլ ուրիշներին Հաւասա-
րացրիր:

—Սխալ ես, սիրելիս, Արդիւլը միշտ Ար-
դիւլ կըմնայ, պատասխանեց իմ Հարցին ու Հեզ-
նութեանը Միքէլ աղէն ճաշից յետոյ. ես ասել
եմ, էլի կրկնում եմ. Արդիւլն անաղուհաց քրդի
շուն է, Արդիւլների Համար է ասած. «շան Հետ
աղպէրացիր, փէտը ձեռիցդ մի վեր քցիր»,
իսկ Հասանն Արդիւլ չի:

—Հապա դու էն առածը չգիտես, թէ «շու-
նը շանից, երկուսը մի տանից»:

—Իսկ դու չեմ լսել, որ ասում է. «քրդի

լաւը չի լինիլ, բայց էս քուրդն էն քրդից ա-
ւելի լաւ է»:

—Աբգիւլ, կամ Հասան, կամ Ալի ու Օս-
ման զանազանութիւն կա՛ն, հարց տուի ես՝ հա-
նաքը մի կողմը ծալած:

—Եթէ իրանց մեծ մարդարէի համար չկայ,
բայց Հայի համար միշտ կայ: Գու յաճախ էս
բանի համար վիճել ես ինձ հետ, և ես քեզ ա-
սել եմ, որ պարսիկը մեզ համար ամեն ժամա-
նակ օսմանցուից լաւ է եղել, ի հարկէ համե-
մատաբար, թէ չէ նրանցից էլ քիչ չենք կերել:

—Ի՞նչ ի՞նչ օսմանցի, ի՞նչ զղբաշ, ի՞նչ Աբ-
գիւլ, ի՞նչ Հասան, մէջ խառնուեցին միւս ընկեր-
ներս, պարզ խօսեցէք՝ մենք էլ իմանանք:

—Սիրելի բարեկամներս, շարունակեց Միքէլ
աղէն, բոլորդ էլ իմացէք, որ իմ հասկացողու-
թեամբ՝ մարդ ձեռից եկած լաւութիւնը ոչ ոքի
համար չպիտի խնայի, իր ու օտար չպիտի հարցնի:

—Դէ, դու միշտ էդպէս ես անում, Միքէլ
աղա, պատասխանեցին ամենքը:

—Չէ, սխալ էք. մի ժամանակ կար, ես
մարդկանց մէջ խտրութիւն չէի դնում, ես ա-
պահով էի, որ էն կեանքումն ինձ համար հաս-

տապարիսպ պալատ եմ շինել, բայց մէջքը կոտ-
րի՛ Աբգիւլի, որ շէնքիս մի պատը փուլ ածեց:

Լսողները բերանաբաց՝ ապուշ ապուշ՝ մտիկ
էին տալիս, սպասելով Միքէլ աղին, որ ինքը
պարզի ասածը: Եւ նա ասաց.

—Խօսքս այն է, թէ մի օր կար ինձ հա-
մար, որ աշխարհքիս երեսի բոլոր աղգերն էլ
հաւասար էին. դէ, ամենքս մի հօր մէջքից ըն-
կած՝ մի միս, մի արիւն ենք, ոնց որ մեր տա-
սը մատը, — որը կտրես, միւսնոյն արիւնը դուրս
կըզայ,

—Բայց Աբգիւլն ուրիշ է ասում, մէջ խառ-
նուեցայ ես:

—Հրաման քեզ, Աբգիւլն ուրիշ է ասում.
հիմի ես էլ եմ ասում ու պնդում, որ թէ օս-
մանցուն լաւութիւն արած՝ թէ լաւութիւնդ
ջուրը գցած՝ մին է, ձեռքիցդ եկաւ՝ օսմանցուն՝
լարծուն ճիճուի պէս՝ ոտքով ճիւղի ու անց կաց:

—Ես քեզ էդ հաւատի տէր չեմ կարծում,
Միքէլ աղայ, խօսքը կտրեց մերոնցից մինը:

—Իլ շատ հարց ու փորձի ետեւից մի ընկ-
նէք, պատասխանեց Միքէլ աղէն, տեսնում էք,
որ ես իմ մեղքը խոստովանում եմ:

նից մեծ մասը մնաց իր սեպհական հողի վրայ, օսմանցուն հպատակ դառաւ:

Էն անբաղդ օրից մինչև էս րոպէն՝ օսմանցին իր հպատակներին հետ վարուում է՝ ինչպէս հովին իւր ոչխարներին հետ. բուրդը խուզում է, կթում է և օգտուում է, տեղն եկած ժամանակ՝ մորթին էլ պէտք է ածում:

Ես, ի հարկէ, սրտով ցաւում էի մեր բաղդի ձեռից հալածուած եղբայրների համար, բաց մտքումս ասում էի, թէ օսմանցին տգէտ է, էսօր էսպէս է վարուում, մի օր խելքի կըզայ, իր շահի համար էղբան պէտքական ոչխարին կաշուահան չի անիլ: Մեղքս ինչ թաղցնեմ, վախտ վախտ էլ մտքումս մեղադրում էի մեր օսմանահպատակ հայերին, որ չեն աշխատում, կամ կարողանում իրանց տէրերի աչքը մտնել, նրանց հաճոյանալ: Մի խօսքով՝ հայերի նեղութիւնի պատճառն իրանց էի համարում: Իդ մտքովն էլ, ոնց որ ինձ համար օրէնք եմ դրել, աչքերս փակ՝ ամենքին իմ ձեռից եկած ծառայութիւնն անում էի, հայ՝ թէ օսմանցի, քուրդ թէ ասորի՝ մի աչքով էի տեսնում բո-

Դ.

Նա սկսեց.

— Ձեզ յայտնի է, որ ես զրից ու պատմութիւնից անտեղեակ չեմ. լոյս դառնայ ծնողս, իր ժամանակին զրոց աշակերտ է արել իր բոլոր որդոցը:

Ես շատ լաւ գիտէի, որ հինգ հարիւր տարի է, հայն իր գլուխն ու իր տունը կորցրած, անտէր ոչխարի նման սարէ սար է ընկել: Նրանցից՝ որին գայլն է տարել, որին ասլանն է խեղդել: Մնացածներն էլ՝ լաւ թէ վատ՝ էս ու էն բարի ու չար, խղճմտանքով ու անխղճմտանք հովիւների ձեռքի տակ՝ մի տեսակ իրանց արեւի ձէնն են ածում, ապրում, գլուխ են պահում:

Թողանք մէկէլներին, մեր խօսքիցը չհեռանանք... Հայոց ազգի մի մասը էն էլ ամե-

լորին: Մեղքս ի՞նչ թագցնեմ, երեք չորս տարի է, որ մեր Աբգիւլն ինձ փոխեց ու փոխեց:

— Է՞լի Աբգիւլ:

— Այո՛, Աբգիւլ, պատասխանեց Միքէլ աղէն ընդհանուր բացականչութիւններին, Աբգիւլ ասածս մի օսմանցի թիւրքի լամուկ էր, յիսունական թուերում՝ մեծ կռուի տարին՝ մեր Յգօրը գտել էր նրան Արփաչայի մօտերքումը մի հայ գիւղում ընկած, անտէր ու անխնամ, մօտ տասը տարեկան:

Տեղացի ժողովուրդը բոլորն Աբգիւլին ատելուս են եղել. գիւղացոնց ասութեամբ՝ Բէհբու-թովի նեղընկած ժամանակը՝ լամուկի հէրը հարիւրի չափ Օսմանցուի գլուխ անցած՝ թալանել, կոտորել է հայ գիւղերը և շատերին սպանել, շատ էլ անասելի բարբարոսութիւններ է արել:

Վերջը՝ երբ Բէհբութովի գործը լաւ է գնացել, լամուկի հօրն իր ընկեր թուրքերն սպանել են, տունը կոտորել ու կողոպուտն առել, քաշուել երկրի խորքերը:

Մէջտեղը պրծել է էգ լամուկը, որ անտէրութիւնով հայ գիւղերում գլուխը մի տեսակ պահել է:

Մեր Յգօրը խղճացել է լամուկին ու հետը բերել մեր տունը:

Է՛ն օրուանից՝ Աբգիւլը մնաց մեր օջաղում:

Դեռ սկզբումը՝ տաւարն էինք ղրկում: Տեսանք, որ իւր գործին արի ու հանգիստ տղայ է, յառաջ քաշեցինք, տան մէջը փոքրաւոր շինեցինք: Փոքրաւորս ո՞րն է. փուչ կենդանին էնքան համ ու քաղցրութիւն ցոյց տուեց, էնպէս հաւատարիմ էր, էնպէս սիրում էր մեր երեխայները, որ բոլորի աչքը մտաւ:

Նրա առաջին փակ դուռը չմնաց:

Անիծածը քանի մեծանում էր, ոյժն ու խելքն էլ աւելացնում էր. դուր չի ասած՝ «հայի հացը՝ թուրքի փորը». մեր տան մեծ ու պստկի համար Աբգիւլը մի պողպատէ սիւն էր, եօթը տակաւնի պարիսպ էր. Աբգիւլ էինք կանչում մինն էլ կողքիցն էր դուրս գալիս. առանց «ջա՛»-ի ո՞վ էր նրա անունը տալիս, էն էր մընում, որ կողքներիս նստացնենք, հետներս հաց ուտացնենք: Ծածկելն ի՞նչ հարկաւոր է, էն էլ կանէինք, եթէ մեր Յգօրը կամք տար:

Մեր Յգօրի խելքը բոլորիցս շատ է, չէ՛, ասում էր, շատ մի՛ երես տաք էգ լամուկին,

մի օր աստառ էլ կուզի, էն ժամանակը պըրծ-
նում չի լինիլ, տակիցը չենք կարող դուրս գալ:

Ջատ կարելի է, Եգօրին էլ չսէինք, եթէ
ինքը՝ զալում սատանայ Աբղիւլը տուր տար,
կամաւորութիւն:

Երբ տեսնում էր, որ սիրելու չափն անց
էինք կացնում, իսկոյն անպիտանն ինքն էր
մեր թափը կոտրում, մեր ձեռքը բռնում:

— Ոչ, ասում էր, իմ գլխի տէրէր, դուք
ձեր բարութիւնովն ինձ շատ էք երես տալիս,
բայց ես իմ չափը պիտի ճանաչեմ, ես գիտեմ,
որ ձեր տան պատիկի ոտն իմ գլխիցը վեր է.
աչքն ինչքան կուզի բարձրանայ, ունքից վերեւ
չի կարող բարձրանալ, թէ որ շատ էլ դօռ տայ՝
կըճղուի ու լոյսը դուրս կըթափուի:

Անիծածը ոնց էլ լաւ հայերէն էր խօսում.
ո՞վ կասէր, թէ թուրքի լամուկ է:

Պետինը մտածը քրիստոնէից աւելի ջեր-
մեռանդ էր, կըպատահէր, որ ժամ կըգար ինձ
կանչելու, մինչեւ որ եկեղեցու դուռը, պատերն
օխտն անդամ չհամբուրէր, չէր հեռանալ:
— Աստծու տունն է, ասում էր, եկեղեցին ո՞րն է,

մզկիթը ո՞րն է, բոլորիս մի Աստուած է ստեղ-
ծել:

Ի՞նչ ասեմ, ամենքիս աչքի եղն առել
էր Աբղիւլը:

Անունն էն էր, որ անվարձ էր ծառայում:
(Վարձ որ առաջարկում էինք, գլուխը մահլի էր
տալիս. — ձեր հացն իմ աչքերը կըկուրացնի, եթէ
մինչեւ մահը ձեր շեմքից հեռանամ, կամ վարձ
վերցնեմ, պնդում էր Աբղիւլը): Բայց վարձս ո՞րն
է, մեր տան անդամներից ո՞րի քսակումն էր
նրանի չափ փող լինում, ում փողը պակասում
էր, Աբղիւլիցն էր ուզում, սո՛ւր, սո՛ւ, ծախսի,
դնի, բոլորը նա էր. ոչ հաշիւ տալ կար, ոչ
համար պահանջել: Միւսնոյն չի, փողը սնդու-
կում պահած՝ թէ Աբղիւլի ծոցումը: Դեռ նրա
ծոցն աւելի ապահով էր, սնդուկը կարող էին
զիշերով գողերը կոտրել, փողը տանել, քեզ էլ
սպանել, իսկ Աբղիւլին՝ քսան արիւնն աչքերն
առած մարդակեր աւաղակները չէին համարձակ-
ուիլ մօտենալ:

Աբղիւլի կտրճութիւնն էր պատճառը, որ
երբ ես, կամ մեր Եգօրը՝ մի երկիւղալի ճանա-
պարհորդութիւն էինք անում, մենք ինքներս

մի դատարկ մտրակով էինք ձի նստում, առաջ ընկնում, իսկ Աբղիւլին՝ միայն Աբղիւլին էինք հետներս վերցնում: Հերիք չէր. թէ զէնք ու զրահ կապած, սև նոճուղ ձիու վրայ նստած Աբղիւլը, թէ հարիւր ձիաւոր՝ մեզ համար միևնոյն էր:

Գետինը խորտակուի ո՛չ, խեղճ է, փչանալու պտղին դեռ սիրում եմ, բերանս չի բացուում, որ մի սրտալի անէծք տամ. սրտիս վրայ չորս մատը իւր էր կանգնում, ինձ ու ինձ հսկարտանում էի, ուրքերս զետնից կտրուում էին, երբ որ մէկ-մէկ յետ էի մտիկ տալիս ու տեսնում Աբղիւլին՝ ձիու վրայ նստած՝ ետեւիցս դալուս: Տղամարդ հօ չէր, «ԺԻՆԻՆ» էր, «ԺԻՆԻՆ», ոնց որ ասում են՝ «ԺԻՆԻՆ» Բաշա:

Սուտ չէր, որ հասարակ մարդի տղայ չէր փչանալու Աբղիւլը, աղնուի ջին էր. մի հսկայ, մէջքն օխտը թիղ, բեղերը մինչև ականջները, մանր ու սուր աչքերից կրակ էր հուր հրատելով դուրս թափում, սև ու հաստ ունքերը՝ մի ծէրով իրար խառնուած՝ միւսներով մինչև աչքերի կոպերն էին հասած, ամեն մի կուռը՝ ոնց

որ շիշակ ծառի բուկ հաստ էր, չորս մատը խոզած սև միրուքը ձուածև սանդրուած էր:

Հագուստն էլ ինչպէս վայելում էր փչին. Աբղիւլը սպիտակ թանկագին շալից չուխէն թևն էր քաշում, կրծքին արծաթէ Բաշա շարում, կռները մինչև արմունկները յետ ծալում, որ համ սև «ԺԻՆԻՆ» թևաբերաններին կարուած ոսկեթել Բաշա (ժապաւէն) երևայ, համ հարկաւոր եղած տեղը՝ իրան նեղութիւն չտայ, ըոպէի մէջ թուրը կամ թուանքը ձեռն առնի, թշնամու գլուխը սոխի պէս թուցնի:

Նստում էր իւր հրեղէն ձիու վրայ Աբղիւլը, երկու զոյգ ատրճանակը թամքի գլխիցը կախում, ձեռիս լայնութիւնով, կէս զազից երկար արծաթապատ խանչալը կողքիցը քաշ անում, քսան ու չորս հատ փամփուշտ պարունակող, երեսն ասղարուր (ասղնէգործ) «ԺԻՆԻՆ» ձախ կռան տակովը գլուխն անցկացնում, տասնութեց անգամ բացուող, դեղնապղնձով զարդարուած Բաշա ուսովը քցում ու ետևներիցս դալիս:

Բոլորը միացած՝ էնպէս էին սագում Աբղիւլին, ոնց որ սիրուն թուրք կնոջ աչքերին սև «ԺԻՆԻՆ» ասուած փոշին, որ դեղաղրիքով աչ-

քերը քաշած ժամանակը՝ թուրք ջաՀէլները խելքը գլխիցը թռցնում է։ Համարձակ կարող եմ ասել, որ էդ բոլորին՝ ոչ մի տարիները չառած կին, կամ հասած աղջիկ չէր կարող սառը սրտով Արդիւլին ոտից գլուխ չափել։

Մի բան միայն Արդիւլի հագոտտին չէր յարմարուում. ինչ արինք, չարինք, նրա գլխի Փասը չկարողացանք գտակի փոխել. — վիզս կրտրեցէք, ասում էր, ինձ Փասից մի գրկէք։

Ով որ կասի՝ թէ մեր աշխարհքի հագոտտին Փաս չի վայելիլ, նա շատ կըստալուի. Մեր Արդիւլն երբ դարդարուում էր ու մուգ կարմիր Փասը թեք գլխին ծածկում, փնջուխն էլ աջ ականջի վրայ կախ քցում, — *HY GYATB*, խառնեց իր սովորական գործածական ուսերէն բացականչութիւնը Միքէլ աղէն, ես չեմ կարողանում ոչնչի նմանցնել, ընչի էլ կարող է մարդ նմանցնել, էդպէս մարդի գլխում խելք կըմնայ, որ նմանութիւնների քամակիցն ընկնի»։

— Դէ, բաւական է, Միքէլ աղա, Արդիւլիդ գովքն անես, էլի կոտրած գգալի նման մէջ ընկայ ես, օրը միթնում է, պատմութիւնդ շարունակիր։

— Հա, լաւ միտս բերիր, խօսքիս զլխով հաւանութիւն տուեց և սկսեց Միքէլ աղէն։

— Գարսն առնելու տարին, 1877 թուին, լուր տարածուեց, թէ Օսմանցին Ռուսի դօրքին մեծ ջարդէ տուել և Մուխթար-փաշան էս օր էդուց կըմտնի Ալէքսանդրապօլ։ Ասում էին, թէ Մուխթար փաշան երգում է կերել, որ քաղաքի ծծկեր երեսից՝ մինչև ոտը գերեզմանումը հալածորներին՝ սուրը քաշելուց յետոյ՝ պիտի ասկեարն (գօրք) երկու բաժին անի, մինը գեղերը մոխիր դարձնելով, մէր ու մանուկ կստորելով՝ զրկի Երևանի վրայ, միւս բաժնով ինքը նոյն աւերածութիւնն անելով՝ գնայ Թիֆլիզ քանդի, Աղայ-Մահմատ-խանի յիշատակը բնակիչների մտքում կենդանացնի։

Ի հարկէ, էդպէս շինովի լուրին ես շատ էլ նշանակութիւն չէի տալ, եթէ ամեն կողմից ժողովուրդը տուն ու դուռ չբռնէին ու տաւարի նման բառտնչելով՝ իմ օգնութիւնն ու խորհուրդը չխնդրէին։

Խեղճերին մի տեսակ սիրտ տուի, յետ դարձրի, խոստացայ ինքս զնալ, ամէն բան տեղն ու տեղը ճշմարտել և մի կարգադրութիւն անել։

Աբղիւլ անունը տալս ու նրա համար ձիանը պատրաստելը ընդհատեց: Թուայ ձիու քամակը, Աբղիւլին ետևս քցեցի ու ճանապարհ ընկալ:

Ալէքսանդրապօլ եմ գնում:

— Գոնէ թուրդ կապիր, դռնաց ետևիցս մեր տնեցին:

— Աբղիւլը համ թուր է, համ թուանք, ասացի ու ձիուն կրնկեցի:

Միայն խոստովանում եմ, փառասիրութիւն էր, թէ ի՞նչ էր, կարմիր խաչը վիզս քցեցի:

Ի՛հ, մարդիս թուլութիւնն է, նշանը չի տաքացնում, չի կշտացնում, բայց տեսքը սիրուն է, ուրիշների աչքումը կախողի նշանակութիւնը բարձրացնում է:

Կէս օրէն ճանապարհ անցանք, դեռ մի գիւղում ձիանոնցն ու մեզ կշտացրինք, ոչինչ չպատահեց. հանդիպողը խոր գլուխ էր տալիս, անց կենում: Ումնից էլ պատերազմի մասին հարցնում էինք, ամենքը կմկմալով միևնոյն տխուր համբաւն էին պատմում ու անխօս՝ ձեռներն առ Աստուած բռնած՝ ախ քաշում:

Իլ կասկածի տեղ չի մնում, քանի յառաջ ենք գնում, լուրերը ճշմարտութեամբ են,

— Լուծ ես, Աբղիւլ, յետ դարձալ մի անգամ ու ասացի. հէնց իմանաս՝ արևը վատ տեղն է մէր մտնում, լուրերը ճշմարտութեամբ են:

— Բ՛նէ, ա՛յ, գլուխը խոնարհութեամբ շարժեց Աբղիւլը:

Վերևի թուրքերէն խօսքն էր նա սիրում դործ ածել՝ իւր հպատակութիւնը յայտնելու:

— Ի՞նչ պէտք է անենք:

— Աստուած ողորմած է, քթի տակին մըրմուռաց Աբղիւլն ու լռեց:

Ե.

— Փամբակու նեղ ձորանցքներից մեկումն ենք, ոլոր-մոլոր ձորակում լուռթիւն է. բացի զետակի հեղասահ խոխոջների արձագանգից՝ ոչինչ չի խանգարում բնութեան լուռթիւնը, երբեմն երբեմն՝ մի բարակ ու զուրեկան քամի տարուբերում է քարախների կատարներին բուսած նուազ խոտերը և ձորն ի վեր կորչում, հեռանում, տեղ տեղ էլ՝ ժայռերի բաշերից լսուում է ընկերին կորցրած թռչնակի յուսահատ ճտճտոցը. հէնց կարծես, սատանէն կնայել է, մի ճանիորդ չի եռում:

Այսպէս սկսեց Միքէլ աղէն իւր պատմութիւնը՝ քիչ շունչ քաշելուց յետոյ:

Անց որ տեսնում էք, կարծես վերի խօսքերը Միքէլ աղի բերանից չէին դուրս գալիս, ոչ խօսակցութիւնի ոճն է իրանը, ոչ բառերը:

Էդպէս գիտէր հանգուցեալը, ում հետ խօսէր, նրա բառերն էր դործ ածում՝ իր սէրը ցոյց տալու զիմացի մարդին: Բայց որովհետև զիրք ու լրագիր շատ էր սիրում, յանկարծ տեսնում էլի՝ ասածները գրքի բառերով դուրս եկաւ:

— Իրիկնապահն էր. ամառն էր, շարունակեց Միքէլ աղէն, բայց ամպոտ օր էր. քամին որ չլինէր, անձրև էլ կըշղար, էն է՝ սկսել էր ասեղի ծէրերի պէս քամու հետ անձրևը ցելթուքս տալ (ցայտել) ու մարդի աչք ու երես ծակծկոտել:

Ես մտքիս մէջ թաղուած, զլուխս մի կողմի վրայ թեքել եմ ու ինձն ու ինձ մըմուռում. վճռել եմ՝ թէ կուզ՝ կէս գիշեր լինի՝ ինձ Ալէքսանդրապօլ քցեմ, լուրն ստուգեմ ու առաւօտեան ցողը դեռ երկնքի երեսը չփռուած՝ վերադառնամ ու խեղճ ժողովրդի դարդին դարման մտածեմ:

— Աղն, յանկարծ լսեցի ետեւիցս Աբգիւլի թոյլ ձայնը:

Թոյլ ու նուազ էր Աբգիւլի ձայնը, էս անգամ նրա ձայնը կասկածոտ ու խղճմտանքն

անհանգիստ մարդի ձայնի էր նմանում, սրտի հեռու մութը քնջներին էր դուրս գալիս:

Ուրիշ անգամ էղպէս չէր ձայն տալիս Արդիւլը, նա համարձակ ու ճակատը բաց, ազատ պատասխանում էր. չեմ ասում, թէ իր կեանքումն Արդիւլն իր չափը կորցրած լինի, բայց խօսելու՝ միշտ բարձր ու լիքը լիքը բարեւ էր բաց թողնում բերանից. իսկ հիմի՝ նրա ձայնի մէջ մի տեսակ դողդողոց կար՝ ոնց որ մի վախկոտ տղայ:

— Աղա՛, մի քիչ կոշտաբար ձայնը բարձրացրեց Արդիւլը, երբ որ ես ղիտմամբ սուտ խուլ ձևացայ, քեզ եմ ասում, աղա՛, չես լսում:

Ի՞նչ կայ. չլինի՞ կասկածաւոր մարդիկ են երևում, ձենդ ընչի՞ է դողում:

— Աղա՛, ինձ մտիկ տուր, այս անգամ հրամայաբար մի աստիճան բարձրացրեց ձայնն Արդիւլը, քեզ եմ ասում, Միքէլ աղա՛, հետդ մարդ է խօսում, շուն չի հաչում:

Ուղիղն ասած՝ սրտիս ծէրը թռպւտաց, մարմնիս միջովը մի սարսուռ անցկացաւ. զգացի, որ Արդիւլիս մէջ սատանայ է մտել, սակայն ձեռքիցս ի՞նչ կըղար, զէնքն ու զօրու-

թիւնը նրա վրայ, ես մի դատարկ մտրակով. բայց ինձ պահեցի, իբրեւ թէ ոչինչ չկայ, սովորական ձևով՝ երեսս կիսատ իրան դարձրի ու հարցրի:

— Հը՛, ի՞նչ կայ, ինչի՞ ըլի:

— Միքէլ աղա՛, արդէն յանդգնաբար դուռաց Արդիւլը, կանց, յառաջ մի՛ գնալ:

Ի՞նչ արած, ձիու սանձը պինդ քաշեցի:

— Գու ինձ էս ասա՛, մենք հիմի ո՞ւր ենք գնում, աչքերիս սուր հայեացք ձգելով՝ հարցրեց Արդիւլը:

— Մի՛թէ չգիտես. — Գիւմրի ենք գնում:

— Աֆերի՛մ, խելօք պատասխանեցիր, հաւանութիւն տուեց Արդիւլն ու քշեց ձին, հետս հաւասարուեց. Գիւմրի՛ն և ոչ Ալէքսանդրապօլ, էդ փեռլա՛րի դրած անունն է, համա ընչի՞ համար ենք գնում Գիւմրի քաղաքը:

— Չլսեցիր, որ ասում են՝ Օսմանցիին յաղթել է, էս երկու օրս կըլցուին զեղերը:

— Չատ էլ լաւ կանեն, մեզ ինչ:

— Մեզ էն՝ որ ասում են՝ ոտը դրած տեղը սուրն է քաշելու, բնաջինջ է անելու, գնում ենք՝ իմանանք, որ գանք մեր ժողովրդի, մեր երեխեքանց կեանքը փրկենք:

— Ի՞նչ թո՞ղ, դու հիմի ինձ էս ասան, դու ո՞վ ես, ես ո՞վ եմ:

— Դու Աբգիւլն ես, ես «շխարհային» յայտնի Միքէլ աղէն: Չեշտեցի «յայտնի» բառը:

— Չէ՛, ես էն եմ հարցնում, դու իմ ի՞նչն ես, ես քո ի՞նչը:

— Օրէնքով՝ դու իմ դռան ծառան ես, ես քո տէրդ ու աղադ, բայց քեզ էլ, երկրին էլ, Աստծուն էլ յայտնի է, որ ես մեր տան հայրն եմ եղել, դու տան որդին:

— Հայրդ լուս դառնայ, սուտ չկայ խօսքումդ. բայց եթէ հիմի մի օտարը տեսնի, որ դու ձին նստած առաջիս գնում ես, ես քո ետեւիցդ ընկած՝ գալիս եմ, իր մտքումն ի՞նչ կրկարծի, թէ դու ո՞վ ես, ես ո՞վ եմ:

— Ամէնքը կ'ասեն էն, ինչ որ իսկապէս է. ես քո տէրը՝ դու իմ ծառան:

— Ի՞նչ էլ շատ ուղիղ է:

Բայց եթէ մեր երկուսի հաղուստիցը դատելու լինէին, ի՞նչ կասէին, թէ դու ի՞նչ աղդ ես, ես ի՞նչ:

Աբգիւլիս փորացաւանքը լաւ հասկացայ և առանց ինձ կորցնելու, պատասխանեցի:

— Ամէնքը կ'ասեն, որ սրանցից առաջինը՝ արեւելից արեւմտի յայտնի, արիւնի խաչը շինքից կախ, հայ Միքէլ աղէն է, իսկ իր ճիւղերը՝ շորերով՝ լեզգի, կամ մի դարաբաղցի թուրք է, բայց զլխի ֆասովն ու միրքի սանդրուածքովը՝ մի կորած մոլորած Օսմանցու լաճի է (չեշտեցի լամուկ խօսքը), որ իր տիրոջ հացով մարդի շնորհք է ընկել ու հիմի լիմարութիւնով՝ գլուխը քամով լցրած՝ ուզում է իր բարերարի երախտիքը նրա մի բուռն արիւնը խմելով լցնել: Հասկացար, անաղուհաց քրդի շուն Աբգիւլ:

— Չէ՛, աղան, մի բանում ուղիղ ես, մէկէլում սխալ. սուտ չէ, որ ես մի Օսմանցու անտէր լամուկ եմ եղել, սուտ չէ, որ եթէ ձեր տունն ինձ իր ծածկի տակ չառնէր, որդու նման խնամք չտանէր, ես հիմի կամ քաղցածութիւնից մեռած կըլինէի...

— Ասա սաստկած, ընդհատեցի ես, շան համար ու ապերախտի համար մեռած խօսքն ատիստ է:

— Սուտ չէ՛, սաստկած կըլինէի, կամ սարերն ընկած՝ աւաղակութիւն անելուս կըլինէի. էն էլ սուտ չէ, որ եթէ առաջին կռուովը Օս-

մանցին ռուսին յաղթած լինէր, դու յիշինէիր իմ հօր ու իմ ծառան, իսկ ես կըլինէի քո տէրն ու բարերարը: Ամեն ժամանակ տատը դաթայ չի ուտիլ, էն տարին անցկացաւ, իսկ էս օր՝ փէյշաֆթարի՝ զօրութիւնով՝ ձեր էռաչը փշրուել է մեր փէյշաֆթարի ոտքի տակ, օրն եկել է, որ քսան—քսան երկու տարուան վրէժն Սամանցին պլտի առնի խաչապաշտից և դու ուզում ես, որ գնաս յառաջն առնին:

—Բնս ինչ կըհրամայես, թողանք, որ Սամանցին դայ, մեր երեխէքանց գլխները հաւի ճուտի պէս պոկոտի:

—Չէ, ով է ասում, հաւն էլ է աշխատում իւր ձագերին ուրուրի ձեռից ազատել. բայց հերիք է, ինչքան դու քեզ մաշեցիր ուրիշների օգտին. էսօր քո իրաւունքն էնքան է, որ քո տան ու գերդաստանի հոգսը մենակ քաշես:

—Էլ ո՞նց քաշեմ, եթէ չգնամ չտեղեկանամ, կարելի է լսածներս սուտ լուրեր են, թշնամու հնարած, կամ թէ քոյաղչու (ներկարար) կարաս է խանդարուել, լեղակը զօրութիւնը կորցրել է, չի ներկում ու ներկարարը

մի սուտ լուր բաց է թողել, որ կարասն ուղղուի, կտաւը լաւ ներկուի *):

—Ոչ ներկարարի կարաս է խանդարուել. ոչ սուտ լուրեր են, ուղիղն էս է, որ Ռուսի մէջքը կոտրուած պրծած է, հիմի Գիւմրուց մինչև Ղարս՝ ռուսի զօրքի մէջիղներն (ղիակ) են շաղ անցած, հիմի երկրի տէրը մենք ենք, մենք, այլ, էս ֆնսր, լաւ տես, Ստամբուլի թախտին նստած ալ Սոմանի փաղիշահը: Գնացին քո խաչն ու աւետարանը, Գուլիս (ժամանակը) հիմի Դուրախէն է, հիմիկէց դէնը, Միքէլ աղայ, ծայլի, մի կողմ դիր քո ուռսերէն լեզուն, թուրքերէնդ մէջտեղ բեր, փառք Աստծու, հօ դու թուրքերէն կարդալ էլ լաւ գիտես:

—Էլ ո՞րտեղից կարող ենք կարդալ, որ օրերս համարած են:

—Չէ, Միքէլ աղայ, չէ, դու ինձ ապերախտ մի անուանիլ, քո հացը քեզ էլ կըփրկի, քո ընտանիքին էլ: Էս ըօպէից՝ Աբդուլն աղա է, Միքէլը ծառայ, բայց Աբդուլ աղայի կերածը հարամ կըլինի, եթէ իւր ծառային տնով տե-

*) Ծանօթ. Այս նախապաշարմունքը մինչև օրս տիրում է ներկարարների մէջ և գործադրուում:

ղով չպաշտպանի. մէկ էլ՝ իմ բերանս կըորդնոտի, թէ որ ես քեզ ծառայ ասեմ. էսօր դու ծեր ես, հօր տեղ ես, ծառաս ես, բայց ես քեզ Միքէլ ԲՊԷ (հայր) կըկանչեմ:

— Դէ, Միքէլ բաբա, ձիուդ գլուխը չես դարձրու, ընկի քամակս, շուտ, դռնաց Արդիւլը, շուտ արա, քանի արիւնն աչքերս չի կոխել, քանի «էֆֆէր» ճակատիդ չի կրակուել, դու ինձ լաւ ես ճանաչում, բնութիւնս տաք է, կարող եմ ինձ կորցնել:

— Բաշ ուստան, (գլխիս վրայ), Արդիւլ աղան, խոր գլուխ տալով՝ ասացի ես ու ընկայ Արդիւլի քամակը:

— Ետեւիցս արի՛, ձիուդ կընկի՛, քանի օրը չի միթնել՝ հասնենք առաջներին գեղը:

2.

— Նր՛, սոց է, սաղոմ է ինձ աղայու-
թիւնը թէ ոչ, ձեռքը կողքին դնելով, մի կողմի վրայ թեքուեց, քիթը ցցեց ու ինքնաբա-
ւական հարց տուեց Արդիւլ աղէս:

— Մօրիցդ աղա ես ծնուել, աղա, աղա մեծացար, էսօր էլ աղա ես, որ կաս:

— Բայց դեռ իմ աղայութիւնս կատարեալ չէ, էն օրը կը լինիմ հաստատ աղայ, երբ կանց կենամ Արդրումի հողը, իմ հօրս արիւնը թափ-
ուած տեղի հայ գեղերի հիմն արեգակ կըհա-
սնեմ, հացերի որձեղէնը կըկոտորեմ, պառաւ էգեղէնի ատամները կըփշրտեմ ու ջահէլ սիրուն հարս ու աղջիկներին ոչխարի պէս յառաջ կա-
սնեմ, Արդրումի մզկիթը կըլցնեմ, կըթուրքացնեմ ու ինձ կնիկ կըշինեմ: Ասան, Միքէլ բաբան, ար-
ժան եմ հարիւր կնիկ ունենալու, թէ ոչ:

— Ունեցող փաշաներն ու բէյերը քեզանից լաւ են:

— ԱՖէրիմ, զիտես աղիդ աչքը մտնելու ձևը:

— Բայց, Աբդիւլ աղան, կմկմացի ես:

— Հը՛, ինչ ես գլուխ տանում, չես տեսնում, որ մտքով իմ կնանոցից սիրունները ջուրում եմ, գէշերին իմ ծառաներին բաժանում, ինչ ես «էֆ» փչացնում:

— Իդ ամէնն իր տեղին, բայց ախար մենք Հիմի ուր ենք գնում:

— Գնում ենք զիշերս առաջներին հայ գիւղումը քենք, ծէքէլահան ձի նստենք, դրնանք Մուխտար փաշից հրաման առնենք, Լօռին քարուքանդ անենք ու Սանահնի վանքը մզկիթ շինենք, մէջը նամազ անենք:

Խեղճ Աբդիւլ, մտածեցի ես, մոլեռանդութիւնը գլուխն է ընկել, արաղի սէս հարբացրել, Հիմի դելն է տալիս (զառանցել): — Իդ շատ լաւ, փորձելու համար վրայ բերի ես. էլ հայի գիւղումն ընչի՛ իջնենք, հայերը քեզ կը վնասեն, աւելի լաւ է՝ քշենք, զիշերս Գիւմրի մտնենք:

— Հը՛, ինչ է, բաբա Միքէլ, զոռոգութիւնիդ կեր չես անում, որ հայ գիւղումը ձիուցդ շուտ վէր գաս, ձիս բռնես, ինձ ծառայես, ոնց որ մինչի օրս ես քեզ արել եմ. ես ուղում եմ, որ գէշերը դեռ չկոտորուած՝ իրանց աչքովը տեսնին, որ իրանց գլխաւոր Միքէլ աղէն՝ օր ծերութեան՝ Աբդիւլի ծառան է, հասկացա՛ր:

— Բաշ ուստան, էդ էլ լաւ ես հրամանք անում, ինչ վնաս ունի, թող իմանան, որ աշխարհքս սանդուղք է, մինը վեր է ըլնում, միւսը ներքեւ գալիս: Բայց քանի օրը չի մթնել, քշենք, զիւղը հասնենք, զեղացիք Հիմի հանդերից եկել են, քուչէքանցումը հաւաքուած՝ զրից կըլինեն տալիս, շուտ հասնենք, որ քնած չլինին: Թող տեսնեն՝ ինչ սիրով ծառայութիւն եմ անում քեզ:

— Թէ էդպէս է, հետս արի, հրամայեց Աբդիւլ աղէս ու ձին քշեց:

Ես էլ ետեւից:



Է.

Տասր ըոպէից մենք Ն. Հայաբնակ գիւղումն էինք. գիւղացիք, իրաւ որ, գիւղամիջում հաւաքուած՝ ղովուացնում էին:

Ամեն տեղ իմ Աբգիւլին ճանաչում էին, հէնց որ տեսան նրան ձին քշելով, բոլորը միասին յառաջ եկան, Աբգիւլին թողացին, ինձ շրջապատեցին. որը ձիուս սանձը բռնեց, որն ստպանդակը: Ամենքը հաւասարական գտակները հանած՝ գոռացին. — բարձր, հազար բարձր, Միքէլ աղա:

— Ոչ, ոչ, տղէք, ինձ թողէք, դուք Աբգիւլ աղին ձիուց իջացրէք, կամ թէ դուք սպասեցէք, ես վեր կըգամ, ինքս մեր Աբգիւլ աղի ձիու սանձը կըբռնեմ. մեր Աբգիւլ աղէն բարի է, կըներէ ինձ, ծերութիւնը չի թող

տալիս ջահէլ տղամարդի պէս ձիուց ցած թռչել, իր ղուլլուղին հասնել:

Մեր Աբգիւլը ուռած փքուած՝ նստել է ձիու վրայ և ինձ է սպասում:

Աչքս թեքեցի, գիւղացիք մտքինս հասկացան. ղեռ ես չէի իջել, որ տասից աւելի կտրիճ տղամարդիկ ներքև քաշեցին Աբգիւլին, հէնց իրանց գօտիներով ձեռները քամակին պինդ պրկեցին ու զէնքերը վրիցը պոկեցին:

— Տղէք, ցախաւել, գոռացի ես:

Ական թօթափել՝ մէկի փոխարէն հինգ հատ կակուղ թբլխու ձիպոտներից կապած ցախաւել մէջտեղ թափեցին:

Մեր աշխարհի ձիպոտների մէջ կարմիր ու բարակ թբլխուցն աւելի պինդը չկայ, տո՛ւր՝ թէ պիտի կտրատուի:

— Դէ, ձեզ մատաղ, իմ հաւան կացած, ինչքան ձեռներիցդ կըգայ, սրա փափուկ տեղերը տաքացրէք:

Ինձ պէս փուխը սրտի տէրը քար եմ կըտըրուել ու անգթացել, քաշուցի հեռու, մի պատի տակ նստեցի, ծերերին զլխիս հաւաքեցի ու

սկսեցի ամեն ինչ տեղը տեղին հաղ ա՛նել, պատմել:

Տուած հրամանս էն էր, որ մինչև պատմութիւնս չաւարտեմ, իրանք վեր հատեն, թէ կուզ մեռնի, ինձ չխանդարեն:

Ինձ էլ հօ լաւ էք ճանաչում, որ ուղենամ մի պտտիկ առակ ծաղկացնելով պատմել, ժամեր կը քաշի:

—Աղա՛, կըմեռնի, հերիք է, միջնորդ են դալիս զիւղացիներից մինն ու միւսը:

—Քաշուեցէք, ձեր գործը տեսէք, անքաղաքավարի մարդիկ, թողէք պատմութիւնս վերջացնեմ:

—Աղա՛, ձէնը կտրուեց, կարելի է շունչն էլ փչեց, վազում է երրորդը, էլ չի շարժուում:

—Ոտացդ մեռնեմ, Միքէլ աղա՛, մեղ տա՛րէնպարտ մի՛ ըներ, յառաջ եկաւ քէհիան (տանուտէր). դու զիտես, որ քո հրամանը մեր գլխէն առաւել է, թող՝ քո Խալիֆա՛ն տառը տղայ ալ սիրիւրական եղնի, ամա մեղք է, շունը տատկաւ:

—Ջան կաղալուն մի՛ հաւատաք, տուէք. դա մինչև Լօսին ու Արդրումի շրջակայքը չը-

ոչնչացնի, մինչև հայ սիրուններին իր կինը չշինի, չի մեռնիլ:

—Միքէլ աղա ջան, յանուն Քրիստոսի, անհաւատի արիւնով սուրբ ձեռքդ մի՛ պղծիլ, թեւիցս քաշեց քահանան, որ աղմուկը լսելով՝ եկել էր և բանի էութիւնը հասկանալով՝ միջնորդ ընկաւ:

—Տէրտէրի պատուին եմ բաշխում, տղէք, հերիք է, ձէն տուի ես. ախար չի լինի, այ՛ հողևորականներ, հէնց սկզբից դուք էք քրիստոնէական ներողամտութեան անունով՝ մեր տունը քանդել, չէք թողել, թէ ազգի ու հաւատի թշնամուն տանք, շանսատակ անենք, ախար մինչև երբ, հրէս հալալ օրինակն աչքերիդ առաջին. քսան երկու տարի է որդու պէս խնամք եմ տարել, ծոցումս եմ տաքացրել, հիմի վաղի օձի պէս՝ իր տաքացնողին էր ուղում շանթի, ասա՛ այ՛ անհաւատ, հայի հացով ես մեծացել, հայից՝ բացի լաւութիւնից՝ ուրիշ վատ չես տեսել, հայը քեզ լինջ է արել, որ նրա արիւնն ես ուղում խմել, այ՛ մարդակեր գաղան:

—Վնաս չունի, Միքէլ աղա ջան, ասած

է՛ «դու լաւութիւն արա ծովը գցիր, ձուկը որ չիմանայ, Աստուած կիմանայ», քո աղ ու հացը դրա աչքերը կը փակի, Աստուած օրհնէ՛ քեզ, դադարացրու, միջնորդեց նորից տէրտէրը:

— Հերիք է, ասացի ես ու մօտ գնացի:

Ի՛նչ հերիք, առջևս ընկածը կենդանի արարած հօ՛ չէ. մի գիտակ է, որ մէջտեղն ընկած է. փոխնորդը քրքրուել է, փափուկ բարձերի կակուղ մսերը ծեծած տուժի կտորների պէս գետնին շաղ անցած են:

Ձեռքս տարայ սրտին, տեսայ դեռ տրըփում է, ապահովուեցի, որ կենդանի է ու հրամայեցի ոչ թէ միայն ձեռքերը լետ չանել, դեռ ոտքերն էլ շղթայել ու չորս, զէնքը կապած պահապանի հսկողութեան տակ՝ մի պինդ սենեակի մէջ բանտարկել: Արիւնը դադարելու և վերքերը ցամաքելու համար՝ հրամայեցի՝ մեր սովորական էրուած փալասներից իւղի մէջ թաթախուած խանձիլն անել, վրէն դնել:

Ը.

— Հր, Արդիւլ աղան, հրամանողդ քէֆը ո՞նց է, երազումդ քանի՞ գիւղ քանդեցիր, քանի՞ եկեղեցի մզկիթ շինեցիր, քանի՞ գէտլարի արիւն խմեցիր, քանի՞ աղջիկների մէջ գլոր գլոր եկար, հարցրի միւս օրը:

— Քո հացն իմ աչքերը բռնեց, աղան, նուազ ձայնով պատասխանեց Արդիւլը:

— Հիմի ուր ես ուզում քեզ զրկեմ:

— Ես գիտեմ, որ իմ տեղս Սիբիրն է լինելու, բայց ես մեռնիմ, դու ապրի, աղան, թէ մի օր Օսմանցին հայի անունն երկրի երեսից չջնջի: Մուսուլմանին ջահանն չկայ, թէ որ իր հողի մէջ գէտլարի շունչ թողայ: Ասենք՝ ես մի անգէտ լամուկ եմ եղել, որ մուսուլմաններից հեռացել եմ, բայց մանկուց լսածները մարդիս մտքիցը մինչև գերեզման չեն թռչիլ, էդ իմ

Հօր խօսքերն են, որ ամեն օր մեր ականջումը հալում էր. նա ասում էր, որ *Քեօլե-բնեբի*՝ որի վրայ ոչոք պատեց ու չորս կողմից նայեցիր, տեսար օգնական, կամ պահապան չունի, ոտիդ տակը քցիր, էնքան գլուխը տրորիր, որ սատկի. բայց եթէ տեսնում ես, որ *Քեօլե-բնեբի* մէջ դօրութիւն կայ, որ նրա թուրը կտրում է, որից հաստատ հաւատացած ես, թէ քեզ մի վնաս կարող է գալ, էղպէսներին սրտով ատիր, իսկ երեսանց կեղծաւորութիւն արա, մինչև որ օրը կրգայ՝ բարին հետը, մի օր էլ նրան կըսպանես:

Գու չկարծես, աղան, որ ես հայի դէմ անձամբ թշնամութիւն ունենամ, իմ խղճմտանքն ասում է, որ *Քեօլե-բնեբի* մէնակ հային պիտի սիրեմ, *չոփի* հայի հացով եմ մեծացել, բայց ես ինչպէս *Տոսո-լման*, իմ կարճ խելքով դատում ու տեսնում եմ, որ *Քեօլե-բնեբի* մէջ ամենքից անտէրն ու անօգնականը Սոմանցուի հողի վրայ հայն է. ու ինչ կարծիք, որ առաւօտից տեղիցը շուտ զարթնող *Տոսո-լմանը* իր մաղձը հայի գլխին պիտի թափի, որ *Չանալեի* չգրկուի:

Հիմի քեզ եմ հարցնում, աղան, ես մեղա-

ւոր եմ, որ ուզում եմ հայի արիւն թափելով՝ *Չանալե* զնամ, ես ո՞ր մուսուլմանիցն եմ պակաս, սրանից աւելի յաջող ու յարմար ժամանակ երբ կրլինի. *Քեօլե-բնեբի* ուսը, որ մեր աչքի եղն առել էր, ինքը կատու էր դառել, մեզ մոկն էր շինել, էս օր մեր ոտքի տակին փռուած է: Ստամբուլից մինչև Թիֆլիզ՝ էս օր *Տոսո-լման* քցած՝ զառնով փլաւն և անուշ կերակուրները վրէն շարուած են՝ և դու ուզում ես, որ ձեռներս ծալեմ, յետ կանգնեմ, թէ ի՞նչ է՝ էն կերակուրները իմ բարերար հայի դառը քրտնքի պտուղն են: Ի՞նչ վնաս, չե՞ս լսել, որ ասում է՝ «հայի հացը թուրքի փորը»:

Էղպէս է, աղան, սուտ չեմ ասում. եթէ հէնց գլուխս ազատ իմ ձեռքն ընկաւ, պիտի աշխատեմ *Քեօլե-բնեբի* արիւնի մէջ ձեռներս թաթախել: Բայց, դէ, ի՞նչ եմ մեծ մեծ բռնացնում, իմ յիմարութիւնից՝ քսան տարի համբերել եմ, մի օր էլ չկարողացայ համբերել, մինչև որ Գիւմրի հասնէինք, զնայի Սոմանցուի թօփի (թընդանօղ) բերանը Գիւմրու բերդումը համբուրէի, յետոյ իմ մանգաղը սրէի, իմ հունձն անէի: Էդ էն էր, որ քո հացն իմ աչքերը բռնեց, էս

րոպէին իրաւունքը քոնն է, ինչ կուզես՝ արա,
ձեռ ու ոտս կապած՝ քո գերին եմ:

— Ուրեմն քո մուրազդ կրկատարեմ, մի
վերջին բարեբարութիւն էլ կանեմ, հէնց հիմի
քեզ կըղրկեմ Գիւմրու բերդը՝ Մուխտար-փաշի
ձեռքը պաչելու, ասացի ես և տանուտէրին
հրամայեցի՝ Աբգիւլիս ոտք ու ձեռքը շղթայած՝
ուղարկել Ալէքսանդրապօլու բերդը:

Ն.

Գիւղում ես ստուգեցի, որ տարած-
ուած լուրերը չափազանցացրած են եղել. իրաւ
է, մի կռուում Օսմանցիք փոքր յաջողութիւն
տարել են, բայց շուտով ջարդ են կերել և յետ
են քշուել:

Ն. գիւղից ես ապահով վերադարձայ տուն,
շտապում էի:

Ելլիկին հանգստացնել էր հարկաւոր:

Մեր Եգօրն Ալէքսանդրապօլումն էր էդ
ժամանակը, նա շատ ափսոսել էր Աբգիւլի հա-
մար, բայց իմ կարգադրութեան համաձայն՝ իմ
մանրամասն տեղեկազրութեան հետ՝ Աբգիւլին
յանձնել էր իշխանութեանը:

Ես չգիտեմ՝ լմա էր արել, վերջումը՝ մեր
Եգօրը, թէ վատ, բայց նա միջնորդել էր և

ղինուորական դատաստանի վճռից փրկել Աբղիւլին:

Աբղիւլը, դէպքի բերմունքով, բանտարկուած է եղել երկու Յամանցուի լրտեսների հետ մի սենեկում: Զինուորական դատարանը կամեցել է երեքին էլ կախել, բայց մեր Նղօրը դնացել վկայել է, թէ Աբղիւլը միւս երկուսի հետ կապ չէ ունեցել:

Պատերազմը խաղաղուելուց յետոյ՝ մեր Աբղիւլին վճռեցին Սիբիրում մշտնջենական բնակութիւն:

Ահա էն օրուանից մինչև օրս՝ աշխարհքիս բոլոր քրիստոնեայ և անհաւատ ազգերի մէջ ես Յամանցուին չեմ կարողանում սիրել, մէկի զըլխին որ Փաս եմ տեսնում, զլիս որդերը շարժուում են, դեռ վայ ինձ, Փաս ծածկող մեր Յամանցուի հայ եղբայրներին էլ ուրախ չեմ լինում տեսնելիս:

Էս խօսքերով վերջացրեց իր պատմութիւնը Միքէլ աղէն:

Վ Ե Ր Ջ:

16306-16313

208

ՀՀ Ազգային գրադարան



NL1333894 1

ՀՀ Ազգային գրադարան



NL1333893 4

84

